ՄՆԱՑԱԿԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՈՐ ՊԵՏՔ Է

ԵՐԵՎԱՆ

ԱՐՄԱՎԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2017

ՀՏԴ

ԳՄԴ

Երկրորդ՝ հավելումներով և վերամշակված հրատարակություն

Գիրքը հրատարակվում է ընկերոջս՝ Երվանդ Թահմազյանի աջակցությամբ:

Այս փոքրիկ գրքում զետեղված են Արցախյան ազատամարտի դժվարին և հերոսական ճանապարհն անցած ազատամարտիկի խոհերը, որոնք խտացել են բանաձևերի նմանվող ձևակերպումներում: Սրանք ստեղծվել են երկար մտորումների, առձակատումների, միայն հաղթելու պայմանով կռիվ տվող հայի հետադարձ հայացքի, իր անցած ուղին հուշերի մաղով անցկացնելու արդյունքում:

«Ապրել նշանակում է իմաստավորել մահը»,-վստահեցնում է մահն իր աչքերով տեսած ու կյանքի գինն իմացող հեղինակը: Ընթերցենք ու փորձենք հաղորդակից լինել մեր օրերի քաղաքացու, հայի, պայքարող հայի սրտի և մտքի խորքերից բխող մտորում-բանաձևերին:

Գիրքը կօժանդակի այն ընթերցողին, ով որոնում է ձշմարտության ճանապարհը:

«ԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԷՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱԿՈՒՄՆ Է...»

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

«Իմ կյանքի հիմնական խնդիրը եղել և մնում է մարդկային ձշմարիտ էության որոնումը՝ պայքարելով գոյության դաժան իրողությունների դեմ»,- իր՝ «Այն ամենը, ինչ որ պետք է» գրքի ներածականում ասում է Մնացական Մուրադյանը:

Գրքույկն ինքնատիպ ձևով է ներկայանում ընթերցողին՝ նախևառաջ պայմանավորված կառուցվածքային առանձնահատկություններով: Գրողը սառը փիլիսոփայական դատողություններով սկսում է խոսքը «Ներածություն» բաժնում, որին տրամաբանորեն հաջորդում է մի շարք բաժանումներով /«Բանական միտք», «Պայքար», «Հայ»/ և ենթաբաժանումներով /«Բանաձևեր», «Աշխարհ», «Արարում», «Մտքի ձամփա», «Հիշողություն», «Ինքնաձանաչում», «Վեհություն», «Մարդ», «Սեր», «Երջանկություն» և այլն/ բուն մասը: Ժողովածուն ավարտվում է եզրակացությամբ:

Հեղինակը սահմանափակվում է՝ միտքն ամփոփելով բավական փոքր ծավալի մեջ:

Ներածական խոսքում գրողը ոչ միայն գրքի բովանդակությանը վերաբերող ինչ-ինչ ընդգծումներ է անում, այլև սեփական դիտակետից, իմաստալից, գիտակ հայացք է նետում փիլիսոփայական յուրաքանչյուր հասկացությանը՝ միտքը շղթայական ձևով բերելով-հասցնելով բուն ասելիքին: Քայլերը կատարվում են ընդհանուրից մասնավորը սկզբունքով. լայն, ընդհանրական մտքերից՝ կոնկրետին բավական անսպասելի անցումներով, ասենք, նարեկացիական խոհերից հասնելով մինչև Հայկական հարց:

Բնության չորս տարրերին զուգահեռ՝ հեղինակը ներկայացնում է սեփական ենթաբաժանումը՝ ենթարկվելով արժեհամակարգում իր սահմանած օրինաչափություններին՝ աստիճանական բարձրացմամբ՝ հացի խորհրդից՝ ջուր, հուր, ջերմություն, եթեր-տարածություն կարգով հասնելով մինչև հիշողություն, ապա՝ հույս, որին հաջորդում է բարձրագույնը՝ շունչը՝ ոգին:

Որքան էլ փիլիսոփայական խորքով, այնուամենայնիվ, գրողը նաև նշում է. «Չհավատանք այն մարդկանց, ովքեր ասում են՝ «կյանքում ոչ մի երջանիկ օր չեմ տեսել»: Դա լեզվի սովորություն է,

ասում են հենց այնպես, ասած լինելու համար, իբր թե շատ են տառապել կյանքում...»: Ապա, միտքը առաջ տանելով, շեշտում է երջանիկ պահերը գնահատելու կարևորությունը, քանզի իրականում հենց այդպես էլ կա. իբրև երջանկության չափման միավոր ակնթարթը պետք է համարել: «Ունեցել են ու չեն նկատել, երջանիկ էին թեկուզ մի պահ՝ ուրիշ «հարստություն» տենչալով ու դժգոհելով»,- միտքն ամփոփում է գրողը:

Մտքերը բանաձևերի բերել ինչ-որ չափով նշանակում է դրանք դնել գիտական հողի վրա, դնել ինքնատեսակ կաղապար-սահմանների մեջ, և կյանքը ենթարկեցնել այդօրինակ չափորոշիչներին: Ահա գրեթե այս չափանիշներով է առաջնորդվել հեղինակը՝ ձեռնարկելով գրքի լույսընծայումը:

Ի դեպ, ներածական խոսքում ևս գրողը հավատարիմ է մնում իր՝ ինքնօրինակ բանաձևերով արտահայտվելու սկզբունքին: Յուրաքանչյուր պարբերություն բացելով այդպիսի տողերով՝ նա գալիս է իր իսկ մտքի վերացարկմանը՝ կրկին փիլիսոփայական խորքով և հոգեբանական նուրբ մոտեցումներով: Այդպիսի օրինակները բազմաթիվ են: Եվ հետաքրքիրն այն է, որ սրանք հաջորդիվ իբրև աֆորիստիկ մտքեր չեն մտնում ժողո-

վածուի՝ արդեն կանոնակարգված շարքերի մեջ: Արդյունքում եզրակացությունը մեկն է. գրողի՝ թե՛ ընդարձակ ներածական խոսքը և թե՛ բուն՝ դասակարգված հակիրճ մտքերի շարքը նրա յուրատեսակ՝ բանաձևերով մտածողության արդյունքն են:

Շեշտը դնելով ճշմարտության որոնումների վրա՝ հեղինակին հաջողվում է մտքերի տարբեր շառավիղներով ձգվելով հասնել «գորդյան հանգույցի» թելերին. իրականության մի եզրը շահամոլությունն է իր բոլոր հետևանքներով, իսկ մյուսը՝ «ապագայի գիտակցությունը իր բոլոր ձգտումներով»: Հեղինակը մեկական պարբերությամբ ներկայացնում է նաև այս հակադրամիասնության բնույթը՝ եզրափակելով. «Ապագայի գիտակցությունը խորացնում է մարդկային ոգու և բնության ներդաշնակությունը՝ նախնական կապից ավելի բարձր համերաշխություն ստեղծելով մարդու և բնության, նաև մարդու և մարդու միջև»:

Գրողն իրականության բարոյական սահմանները, մարդկային գոյությունն ընդհանրապես չափում է սեփական չափորոշիչներով, որի հիմքում կրկին ճշմարտության իմացությունն է, ձգտումը դեպի ճշմարիտը, նրան հասնելու կամ չհասնելու, նրանից շեղվելու և կամ թե նրա սահմանած ուղով ընթանալու կշիռը: Ինչո՞ւ. ըստ հեղինակի՝ «մարդը

գտնվում է տառապանքի մեջ, որովհետև չգիտի ճշմարտությունը իր և աշխարհի մասին», իսկ մյուս կողմից էլ՝ «բարոյականությունից շեղվում են ճշմարտությունից շեղվելով»:

Գտնված լինելով կյանքի և մահվան սահմանային վիճակում՝ գրողը հստակորեն կարողանում է նրբագծել մարդկային էության խորքային գիծը, երբ «ճակատագրական սահմանի վրա բնավորությունները դառնում են թափանցիկ»: Եվ ուշագրավ է հեղինակի ամփոփումը. «Ապրել նշանակում է իմաստավորել մահը... Մահվանից հետո վերածվում ես խրատի»:

«Կարո՞ղ է մարդը տարանջատված ապրել, առանց իմաստ գտնելու իր գոյության մեջ, առանց լսելու ընդհանրական ես-ի ձայնը իր էության խորքից, առանց իմաստավորելու իր տառապանքը և նույնիսկ մահը, առանց զոհաբերություն հանձն առնելու՝ հանուն մեծ միասնության և ներդաշնակության»: Ահա իր տեսակի մեջ ինքնատիպ հռետորական մեկ հարց-բանաձևում ևս՝ գրողի մտքերից՝ ապրելու, անգամ տառապանքի և մահվան իմաստին վերաբերող:

Նախ՝ ճշմարտության ճանաչում, քանզի «հոգին ապրում է ճշմարտության մեջ», ճշմարտությունն իբրև արժեք, իբրև արդյունք, ճանապարհ,

ապա՝ մտքի թռիչքը և արարման արվեստն ու դրա հաճույքը, մարդկային հոգու գոյությունն ու ինքնաճանաչումը, այնուհետև ապրելու, մարդ լինելու արվեստը, ապրելուն, պայքարին, հաղթանակների բերկրանքին, հոգու և մարմնի ներդաշնակությանը և ի վերջո երջանկություն գաղափարին վերաբերող մի շարք ասույթներ են զետեղված գրքում:

Հեղինակը հատկապես կարևորում է մարդ-բնություն կապը, ավելին՝ նա մարդկային հոգու ներդաշնակությունը ճշմարտացիորեն տեսնում է հենց այդ կապի մեջ, քանզի, ըստ հեղինակի, «զատվել բնությունից նշանակում է բանականությունից զրկվել»:

Ակամա այն տպավորությունն է ստեղծվում, թե հեղինակի ներածականն արդեն իսկ մի ծավալուն, խորքային իմաստախոսություն-բանաձևում է, որով ամեն ինչ ասված է: Ներածականում նշվում է գրողի կյանքի նպատակը և հիմնական խնդիրը, կյանքի նպատակն ընդհանրապես, ասել է՝ գիրքը անձնական-անհատական խոհերի ու մտորումների բանաձևումները լինելով՝ նաև դուրս է եկել իրենից, դարձել մարդունն ընդհանրապես:

Նույն օրինաչափությամբ կառուցված է նաև գրքի «Եզրակացություն» մասը: Այստեղ հեղինակը կրկին պնդում է մարդկային բարոյականության կապը բնության և բանականության հետ՝ ընդ որում բանականությունն այդ կապի համար իբրև միջոց ներկայացնելով. չէ՞ որ բանականությունն է մարդուն ցույց տալիս «գոյություն ունեցող, զգայուն, դատող, բանական արարածներին անհրաժեշտ հարաբերությունները»: Իսկ բնությանը պետք է հաճելի լինել առաջին հերթին մարդասիրությամբ, ասել է՝ գործել նախ ամբողջ մարդկային ցեղի, ապա և, ինչը բխում է նախորդից, սեփական երջանկության և ինքնապահպանման համար, բնականաբար՝ լայն, տեսակի առումով: Գրողը կոչ է անում, որ նախ արթնանա մարդու միտքը՝ հետագայում զորեղ և արարող դառնալու ակնկալիքով: «Թո՛ղ վերադառնա աստվածային բանականությունը, որն անարդարացիորեն զրպարտված ու նսեմացված է դրանից սարսափող բոլոր շահամոլների կողմից»: Գրողը հաղորդագրություն է ուղարկում մարդուն և աշխարհին՝ իբրև սկիզբ և իբրև ավարտ ընդունելով կարգախոս դարձրած միտքը՝ մարդը պետք է իր արարքներով օգտակար լինի մարդուն, մարդկային ամբողջ ցեղին ընդհանրապես:

Ժողովածուի ներքին բաժանումներն օրինաչափ են, իսկ խորագրերում մտքի աստիճանավո-

ռումն է՝ դեպի վեր ուղղվածությամբ: Մտքերի տարանջատումը, ի դեպ, նաև խիստ պայմանական է, որովհետև առկա է ներքին բովանդակայինտրամաբանական կապը:

Գրողը ժամանակ առ ժամանակ դիմում է նաև արդեն բյուրեղացած իմաստախոսքերին, և սա էլ է արդարացվում. նա նշում է, որ առանց դրանց՝ ներկայացվածը թերի կլիներ: Ասել է թե՝ հեղինակը ստեղծել է սեփական խոհերի հոսքի բանաձևված պատկերը՝ իբրև հիմք ընդունելով արդեն հայտնի մտքերը՝ իհարկե նրանց մի մասը կրկին բեկելով սեփական մտածողության պրիզմայով /համեմատենք՝ «Արդար բաժանիր, որ տիրես. արժևորիր արժանավորին» կամ «Մարդու վերջը բարի լինի. ով ինչ անի, իրեն կանի» և այլն/:

Ամփոփենք հեղինակի մտքերից մեկով, որով և ավարտվում է ժողովածուն՝ առանց մեկնաբանությունների. «Վերջ նշանակում է սկիզբ և տրամաբանական հավերժ ընթացք»...

Բանասիրական գիտությունների թեկնածու
Կարինե Մարտիրոսյան

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Անհագ է մարդկային շահամոլությունը, որը ամրապնդվում է չարաշահվող «բանականությամբ» ու շպարվում կեղծիքով, որի խորքում, եսապաշտության, ընչաքաղցության, փառամոլության, հեշտամոլության անսանձ դևերն են թաքնված: Ջսանձահարելով այդ դևերին՝ մարդը նրանց ստրուկն է դառնում, թեև կարծում է, թե գործում է իր ազատ կամքով ու ինքն է տնօրինում իր ձակատագիրը: Խնդիրն այն է, որ ուրիշներին կողոպտելու, նրանց տանջանք ու մահ պատճառելու գնով է իրականացվում այդ «նպատակը», որը բոլորովին էլ անհրաժեշտություն չէ:

Շահամոլությունը միայն մարդուն է հատուկ: Բնության մեջ այդպիսի բան չկա: Եթե բանականությանը նմանվող տարրեր կան կենդանական աշխարհի որոշ տեսակների վարքագծի մեջ, ապա դրանք երբեք չեն չարաշահվում, այլ ծառայում են սոսկ բնական անհրաժեշտությանը:

Կյանքի խորհուրդը հենց բնական անհրաժեշտության խորհուրդն է, և դա է հիմքը մեծ ներդաշնակության:

Իր կամքի տեր լինել նշանակում է ազատ լինել: Սա արդեն մարդկային ոգու օրենքն է, որն իրա-

գործվում է ոչ թե հակադրվելով բնությանը, այլ ձանաչելով բնական անհրաժեշտությունը և հարգելով դրա խորհուրդը, այսինքն՝ **Բնէությունը:**

Իսկ շահամոլության մեջ խորհուրդ չկա: Շահամոլությունը այլասերումն է օգուտ ստանալու բնական ձգտման, որը հատուկ է բոլոր կենդանի էակներին՝ իբրև գոյատևման բնական պահանջ:

Այլասերվելով՝ այդ ձգտումը դուրս է գալիս բնական անհրաժեշտության սահմաններից, հակադրվում բնությանն ու դրանով կործանում նաև մարդկային ոգու իսկական ազատությունը: Եվ ամենասոսկալին այն է, որ մարդու հետ ստրկանում է նրա բանականությունը և սկսում գործել իր դեմ:

Արդյունքում գալիս ենք այն եզրակացության, թե իսկական չարիքը, որը մարդկությանը ավելորդ տանջանքներ է պատճառում, հենց շահամոլությունն է իր բոլոր հետևանքներով: Շահամոլությունը ոչ միայն մարդու բարոյական աշխարհն է ապականում, մարդկանց տարանջատում իրարից, չարացնում իրար դեմ, այլև ապականում է ու խեղաթյուրում բնությունը՝ երկակի սպառնում մարդկության ապագային: Օգուտ ստանալու բնական ձգտման այլասերումը դարձել է սպառնալիք հենց գոյատևման դեմ, դարձել բուն իսկ օգուտի ժխտումը, այսինքն՝ մեծագույն վնաս:

Օգտակար կլինես ձշմարտությունը ձանաչելով:

Մեզ համար իմանալի ձշմարտության ձանաչումը ինքնին մեծագույն արժեք է՝ ամենահիսկական ու մնայուն վարձատրություն տառապանքների դիմաց, որ կրում ենք հակասությունների վրա հիմնված աշխարհում մեր գոյությամբ:

Մարդը գտնվում է տառապանքի մեջ, որովհետև չգիտի ձշմարտությունը իր և աշխարհի մասին: Տառապանքներից ազատվելու գլխավոր պայմանը ձշմարիտ իմացությունն է, որը կարելի է վաստակել ընկալման, համեմատության, տրամաբանական հետևության և ապացուցման միջոցով: Իմացությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ ընկալման համար անհրաժեշտ պամանները և սեփական փորձն առկա են: Իմացությունը և հավատը հանդես են գալիս միասնաբար:

Միայն բանական հայեցողության միջոցով կարելի է ձանաչել բացարձակ կեցությունը, հակադրությունների համընկնումը: Ձանաչողությունը անվերջ գործընթաց է և այն երբեք չի կարող ավարտվել, քանի որ ձշմարտությունն անսպառ է:

Ձանաչման ուրախությունը մեզ մղում է գործելու, բանականության լույսով հակասությունների հնարավոր լուծումը գտնելու՝ ավելի ու ավելի խոր

ըմբռնելով բնության ներդաշնակությունը: Վերլուծելով այդ ներդաշնակությունը մեր հոգեկան ու նյութական գործունեությամբ՝ հասնելու ենք ուրախության վերին ոլորտները, ստեղծագործելու երջանկության, որ իր բուն անարատ էությամբ անշահախնդիր է, ինչպես իսկական սերը: Այդ սիրո լույսի տակ տրտմություններն անգամ իմաստավորվում են ճանաչման ուրախությամբ, գտնում են կյանքի ու մահվան հաշտությունը մեր իրականությունում:

Ճանաչման ուրախությունը երջանկություն է պարգևում: Չհավատանք այն մարդկանց, ովքեր ասում են. «Կյանքում ոչ մի երջանիկ օր չեմ տեսել»: Դա լեզվի սովորություն է, ասում են հենց այնպես, ասած լինելու համար, իբրև թե շատ են տառապել կյանքում: Ոմանք էլ մի տեսակ լրջությամբ են ասում, սակայն սրանց էլ պետք չէ հավատալ: Երկու դեպքում էլ մարդիկ ունեցել են լիության պահեր, երբ ոգին ապրում է ամենատարբեր հանգամանքներում, պահեր, երբ անմիջականորեն ընդարձակվում է ես-ը, ներդաշնակվում էության հետ, հրձվում և դառնում անհունորեն մեծ: Ունեցել են ու չեն նկատել, երջանիկ էին թեկուզ մի պահ՝ ուրիշ «հարստություն» տենչալով ու դժգոհելով:

Կյանքն էլ մարմնականի ու հոգեկանի անքակտելի միասնությամբ հարատև մի շարժում է՝ իր ռիթմով, պարբերականության հայտնի կամ անհայտ օրենքներով, և անպայման լինում են պահեր, երբ հոգին ոսկեզօծվում է:

Ով իսկապես շատ է տառապել, ում կյանքը լի է ցավերով և զրկանքներով, նա առավել ևս կգնահատի այդ պահերը և կասի. «Փառք աստծո, իմ կյանքում էլ եղել են երջանիկ պահեր»: Ու նա գիտե, որ անիմաստ է բողոքել ճակատագրի դեմ, թե «կատարյալ երջանկություն» չկա:

Ներողամիտ լինենք ցավի հանդեպ ու լավ գիտենանք՝ անկարելի է ունենալ ավելի մեծ երջանկություն, քան այն, որ ունենք կյանքում, որն այնքան քաղցր է ու այնքան դառը, այնքան վատ ու այնքան լավը, միաժամանակ՝ իդեալական ու իրական: Եվ որ պարունակում է ամեն ինչ ու հաշտեցնում է բոլոր հակադրությունները: «Սա է այն պարտեզը, որ պետք է մշակել ջանասիրաբար»:

«Մեր պարտեզը» այսօր հասել է ոչնչացման եզրին՝ միջուկային պատերազմի սպառնալիք, բնության ապականում, խեղաթյուրում, անհաշիվ մսխում...

Ճակատագրակա՞ն են արդյոք դրանք, մարդու բնատուր հատկությունների տրամաբանական

զարգացումն են, թե՞ աղավաղումը, որ կարելի է ուղղել...

Միայն ուղղվելով, քավելով և խոստովանելով կվաստակես ապրելու իրավունք:

Ապրելու, գոյություն ունենալու զգացումն է, որ իր նախնական ձևով, իբրև բնազդ, հատուկ է ամբողջ կենդանական աշխարհին, առավել ևս՝ մարդուն: Անշուշտ դա է մղիչ ուժը մյուս բոլոր զգացումների, որոնք կոչված են ծառայելու ինքնապահպանությանը: Երբ ապրելու անգիտակից ուրախությունը բարձրանում է գիտակցական մակարդակին՝ միաժամանակ կապված մնալով բնությանը՝ իր նախաստեղծ արմատներին, ապա մղիչ ուժն էլ ոգեղենանում է, դառնում մշտապես գործող հոգեբարոյական ուժ:

Այդ ոգեղենացված ուժն է, որ հնարավոր է դարձնում ոչ միայն էությունը տեսնել, այլև մտածել ու ըմբռնել, ներդաշնակվել բնության հետ, ապրել ու հրձվել բնությամբ, զարմանալ և սքանչանալ: Այդպես ծնվում է իմանալու, ճանաչելու, ճշմարտությանը հասնելու հավերժական ձգտումը: Խորագույն ուրախություն, որը ոչ միայն անսպառ է, այլև սկսվելով սքանչացումից՝ իր հետ բերում է ավելի մեծ սքանչացում: Մշտապես վառ է պահում գերագույն **նպատակը** մարդու առջև ու մղում գործելու: Եվ մարդը ստեղծագործելու երջանկության վերին ոլորտները բարձրանալով, հաղորդվելով տիեզերական գոյի խորհրդին՝ գեթ մի պահ տեսնում է **նպատակը,** որ թվում է անհուսորեն հեռու, սակայն և այնքան մոտ՝ լուսեղեն գագաթի նման: Եվ հմայվում է մարդ էակը՝ սրբազան մի անհանգըստությամբ, իր գոյության իմաստավորումն է զգում այդ հավերժական ձգտման մեջ, շատ հաճախ ենթագիտակցաբար, իսկ երբեմն հասնելով այնպիսի գիտակցման, որ դառնում է Նարեկացի կամ Էյնշտեյն, Պլատոն կամ Սպինոզա...

Սքանչացումն է սկիզբը իմաստասիրության: Սքանչանալ նշանակում է զարմանալ երկյուղած զարմանքով, զմայլվել խորհրդավորության զգացումով, ձգտել ճշմարտությամբ լուսավորվելու իմաստությանը:

Խորհրդավորության զգացողությունը ամենագեղեցիկ ու խոր ապրումն է, որ վիճակվում է մարդուն, և դա է հիմքը արվեստի, գիտության, հավատքի. այն տիեզերական զգացումը, որն անշուշտ վեր է պաշտոնականացված իրարամերժ կրոնական գաղափարախոսական դոգմաներից:

Խորհրդավոր է նաև մարդկային գոյության ուսումնասիրությունը:

Բոլոր մեծ մտածողներին հետաքրքրել է մարդ-

կային գոյության առեղծվածը, այսինքն՝ ամենալայն առումով հուզել են մարդկային բանական ու մահկանացու էակի և հավիտենական տիեզերքի փոխհարաբերության խնդիրները, որոնք «Սասունցի Դավիթ» էպոսից, շումերաքքադյան «Գիլգամեշ» էպոսից, հին եգիպտական՝ «Հուսահատի զրույցը իր հոգու հետ» քնարական երկից, աստվածաշնչյան՝ «Հոբի գրքից» մինչև այսօր կրկնվել ու չարչրկվել են նույն մտահոգությամբ, այսինքն՝ մարդկային գոյությունը իմաստավորելու ձգտումով, և խորքում մնացել են անլուծելի:

Հիմնական նպատակը ինքնաճանաչումն ու ինքնակատարելագործումն է՝ որպես տիեզերական միավոր գոյություն ունեցող մարդկության և այդ միավորի մասնիկը համարվող մարդկային անհատի: Ըստ որում, ամբողջի և մասնիկի, այսինքն՝ հասարակության և անհատի փոխհարաբերությունները եղել են այդ խնդրի մյուս՝ ավելի գործնական սոցիոլոգիական երեսը:

Փիլիսոփաները այդ խնդիրը հետազոտել են ըստ էության, քանի որ հիմնական նպատակը եղել է ընդհանրապես աշխարհի բազմակողմանի ճանաչումը բանականությանը մատչելի հասկացությունների միջոցով:

Նախ այն, որ մարդ էակը Աստծո կամքով, թեպետ սատանայի դրդմամբ, ենթարկվում է փորձության, որը տրտունջ ու տառապանք է հարուցում նրա մեջ, նույնիսկ՝ բողոք: Եվ նա երկփեղկվում է հավատքի և տարակույսի, օրհներգության և անեծքի, ցնծության և տրտմության միջև: Սկսում է իր գոյության իմաստը փնտրել, այսինքն՝ նրա մեջ զարթնում են ինքնագիտակցությունն ու ճշմարտության որոնումը: Ծնվում է բարու և չարի ներքին պայքարը, նրա հոգին դառնում է Աստծո և սատանայի մրցակցության ասպարեզ, և մարդկային կեցության մեծ խնդիրներ են ծառանում նրա առջև:

Երկրորդ, հենց այդ ներքին պայքարի շնորհիվ մարդու առջև բացվում է տիեզերական կեցության վսեմ պատկերը: Անցնելով տառապանքների և տարակույսների բովով՝ զգում է այդ մեծ ամբողջության խորհուրդը և իր տեղն ու դերը դրա մեջ: Դուրս է գալիս իր ես-ի սահմաններից և հասնում տիեզերքի «սքանչելիքները» տեսնելու, դրանց իմացությամբ երկյուղածորեն հրձվելու ու չարից հետ քաշվելու իմաստությամբ: Թեպետ տարակույսի մի ստվեր, այնուամենայնիվ, մնում է նրա հոգու մի անկյունում՝ լռության քողի տակ...

Իրողությունն այն է, որ մեր «գերքաղաքակիրթ» դարը կորցրել է սրբության զգացումը ար-

ժեքների հանդեպ, հացի հանդեպ՝ սննդի հանդեպ, և դա ազդում է մեր բարոյականի, մեր կենսափիլիսոփայության վրա: Հեշտորեն թափում, փչացնում, շռայլում ենք նույնիսկ այն սնունդը, որը երբեմն դժվարությամբ ենք ձարում: Սննդի նախնական, հիմնական արժեքի զգացողության կորուստը նպաստում է, որ արժեզրկվեն նաև ուրիշ կարևոր սրբություններ, որոնք իմաստավորում են կյանքը, այնինչ ավելի ու ավելի տուրք ենք տալիս այնպիսի բաների, որոնք մեր բարօրության համար չեն:

Հացը խորհուրդ ունի և սրբություն է: Պետք է հարգել հացի խորհուրդը: Հացից ավելին է ջուրը՝ անձրևը, առանց որի սնունդ չի լինի: Ջրից ավելին է հուրը՝ ջերմությունը, որից անձրև է ծնվում: Ջերմությունից ավելին է եթերը՝ տարածությունը: Տարածությունից ավելին է հիշողությունը: Հիշողությունից ավելին՝ հույսը: Հույսից ավելին՝ շունչը՝ ոգին:

Պետք է իմանալ ձշմարտությունը, իսկ իմանալու համար՝ գործել, կատարել, սրբազան պարտականությունները. գործում է նա, ով ձգտում է երջանկության: Երջանկությունը անհունորեն մեծն է, տիեզերական **Ինքը,** այսինքն՝ աշխարհը: Եվ մարդն էլ մի «ինք» է ու որքան ավելի է գիտակ-

ցում իր էական կապը մյուս բոլոր «ինքերի» և համընդհանուր **Ինքի** հետ, այնքան ավելի է ընդարձակվում նրա ես-ը, դառնում անհունորեն մեծ, այսինքն՝ երջանիկ: Էությունը ամբողջ այս աշխարհն է:

Արդարև, նա, ով տեսնում է, մտածում է, իմանում է, սիրում է, ով վայելք է զգում էությունից, ով ներդաշնակվում է էության հետ, ով հրձվում է էությունով, նա ինքնիշխան է դառնում և իր կամքի տերը: Ընդամենը մի քանի տասնյակ պարզ, հստակ, բյուրեղացած հասկացությունների մեջ է ամփոփված այս ամենը, և այդ մտքերը գրվել են մոտ երեք հազարամյակ առաջ, սակայն դեռ այսօր էլ ոգու սովից տառապող, սպառողական տենդով բռնկված ու տարանջատված, տագնապած աշխարհում կարող են հոգու սնունդ լինել շատերի համար, մտքի և զգացմունքի բնական խտացրած սնունդ:

Մտքի և զգացմունքի վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև արտաքին և ներքին երևույթները: Արտաքին երևույթների բացակայության դեպքում ներքինը չափազանց վտանգավոր գերակշռություն կստանա: Ջղերն ու երևակայությունը շատ մեծ տեղ կգրավեն էության մեջ: Երբ սովոր չես, որևէ արտաքին երևույթ վիթխարի է

թվում և վախեցնում մի տեսակ: Սկսում ես վախենալ կյանքից ու չգիտես, թե ինչ անուն տալ դրան:

Անունը մարդիկ են տվել և տալիս են էակներին, իրերին, իրենք իրենց ու նաև բնական ոգեկան երևույթներին, ուստի թվում է՝ հարաբերական բան է անունը, ոչ էական մի հատկանիշ: Սակայն, ո՞վ գիտե, բնության մեջ չկա՞ անվան համազոր մի բան, որով արարածները ճանաչում և ձգտում, մտերմանում կամ վանում են իրար: Մի բան, որի շնորհիվ անկենդան տարրերն անգամ միացություններ են կազմում կամ խուսափում իրարից: Եվ գուցե անունը մարդկայնորեն գիտակցված արտահայտությունն է այդ բանի, էության ուղին ցույց տվող նշան, որով մարդկային ոգին իմաստավորման ճանապարհներ է գտնում աշխարհի թվացյալ քաոսում...

Իմաստավորման ուղիներից մեկն էլ տանում է դեպի գեղեցիկի ճանաչումը: Իմաստասերները միշտ էլ ուսումնասիրել են գեղեցկությունը՝ դրա էությունը բացահայտելու համար: Իսկ ո՞վ է գտել մինչև հիմա դրա բուն գաղտնիքը, և լավ է, որ չեն գտել ու չեն էլ կարող գտնել: Թեպետ լավ է նաև այն, որ շարունակում են փնտրել ու միշտ պետք է փնտրեն: Գեղեցկությունը հմայում է և հիացնում է խորհրդավորության շնորհիվ, ու բոլոր բացատ-

րություններից հետո, ի վերջո, անբացատրելիության խորհուրդն է, որ երկյուղալից սքանչացման պահին մեզ ստիպում է աստվածային կոչել գեղեցկությունը, ոչ միայն բնության մեջ, այլ նաև մարդկային հոգում: Եվ նույնիսկ գալիս է այն գիտակցությունը, թե մեր բանականությունն իսկ գեղեցիկ է հենց այդ զգացման շնորհիվ, որով ընկալում ենք բնության զգայելի կամ մտքով ընկալելի ներդաշնակությունը և ոչ միայն ընկալում, այլև վերստեղծում երբեմն իբրև արվեստի գործ...

Գեղեցկության ընկալման կորստի պատճառով առհասարակ կորչում է կյանքի թարմության զգացողությունը: Կորցնողին սպառնում է ամենասոսկալի հիվանդությունը՝ հոգեկան բթացումը, որն ունի երկու զարհուրելի երես: Մեկը հուսահատ անտարբերությունն է, որը տանում է դեպի հոգեկան մահ, մյուսը՝ զանազան դիմակների տակ թաքնված անզգամությունը, որն ի վերջո դառնում է ցինիզմ՝ թաքուն կամ բացահայտ: Այդ վտանգը կանխելն է ամենամեծ բարոյականությունը:

Բարոյականությունից շեղվում են ճշմարտությունից շեղվելով:

Բոլորս էլ կարծես գտնվում ենք ճշմարտության և ստի, բարիքի և չարիքի, գեղեցկության և այլանդակության, հաղթանակի և պարտության այն

նուրբ սահմանի վրա, որից մի քայլ այս կողմ կամ այն կողմ, և ազնվագույն մարդը կարող է հանկարծ ոձրագործ դառնալ, իսկ ամենաստոր մարդը կարող է հանկարծ ազնվագույն մի բան անել: Այդ ձակատագրական սահմանի վրա բնավորությունները դառնում են թափանցիկ: Բոլորի մեջ երևում է նույն մարդկային էությունը, որտեղ մշտական պայքար է մղվում բարոյական իդեալի և մութ կրքերի միջև: Իսկ դատավորը սրտի ձայնն է, բուն մարդկային արժանապատվության ձայնը, այսինքն՝ խիղձը: Խղձի գաղափար-զգացումը ծընվում է այդ սահմանի վրա և դառնում այն ներքին ուժը, որը գործի է դնում բնավորության բոլոր զսպանակները՝ հաղթահարելով նույնիսկ սոցիալական դրության պարտադրանքները: Եվ այդ գաղափարզգացումից մղված, երբեմն նույնիսկ ենթագիտակցորեն, միշտ որոնումների մեջ, միշտ անհանգիստ տարակուսում կամ հաստատում, տառապում կամ երջանկանում ենք, նայած թե ինչ կասի ներքին դատավորը՝ խիղձը: Խղձի գործակիցը չափվում է նաև ձշմարտության որոնմամբ:

Ի՞նչ է նշանակում ձշմարտության որոնում: Այս հարցի պատասխանը կարելի է ամփոփել մի բառով՝ **Ապագան:**

Յուրաքանչյուր անհատի ապագան իր կյանքում՝ բարոյական առումով, և ավելի մեծ խնդիրը՝ համայն մարդկության ապագան՝ դարձյալ բարոյական առումով: Եվ նաև հետմահու ապագան մարդու տիեզերական գոյության մեջ, այդ մեծ գաղտնիքը, որը չարաշահվելով և խեղաթյուրվելով «կրոնական գաղափարախոսների» կողմից, շատ հմտորեն օգտագործվում է համայն մարդկության դեմ:

Մեծագույն խոչընդոտը ապագայի ձանապարհին անհատներին իրարից մեկուսացնող **տարանջատման** խնդիրն է:

Կարո՞ղ է արդյոք մարդը տարանջատված ապրել՝ առանց իմաստ գտնելու իր գոյության մեջ, առանց լսելու ընդհանրական ես-ի ձայնը իր էության խորքից, առանց իմաստավորելու իր տառապանքը և նույնիսկ՝ մահը, առանց զոհաբերություն հանձն առնելու՝ հանուն մեծ միասնության և ներդաշնակության: Հարցի նախնական կողմին տրված ժխտական պատասխանից անհրաժեշտորեն բխում է բուն հարցը: Ինչպիսի՞ն պետք է լինի մարդկային գոյության բնահասարակական ներդաշնակությունը, որպեսզի չլինի քայքայող տարանջատում, ոչ մի մասնիկ չմեկուսանա իր տառապանքի և տանջանքի մեջ, և այդ ներդաշնակությունը «կենդանի կյանքով» լիանա ու զարգանա:

Մշտապես լինի շարժում, լինեն իրադարձություններ և դեպքեր, սակայն հիմնված ոչ թե անհեթեթությունների վրա, ոչ թե Աստծո և սատանայի մրցակցության վրա, որ մարդու համար դառնում է իսկական ողբերգություն:

Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի բուն խնդիրը մարդկային կեցության իմաստի որոնումն է և բարենորոգման տենչը, կատարելության ձգտումը՝ տիտանական մենախոսության տակ թաքնված ներքին դրամատիկ ողբերգական երկխոսության միջոցով, այսինքն՝ ներքին պայքարով: Շատ կարևոր է «ի խորոց սրտի խոսք ընդ աստուծոյ» արտահայտությունը, որ Նարեկացին կրկնում է յուրաքանչյուր գլխից առաջ: Այդ երաժշտական թեմատիկ կրկնության շնորհիվ իմաստային ու արտահայտչական բացառիկ ուժ է ստանում տվյալ արտահայտությունը, կարծես իր մեջ խտացնում է երկփեղկվածության՝ ներքին, թաքուն երկխոսության ամբողջ դինամիզմը: Նույնիսկ դառնում է յուրօրինակ մի բանաձև՝ բնորոշվող ներքին պայքարով:

Հետևաբար, պետք է սեփական ներաշխարհում մշտապես ընդունել մեծերին: Հարազատ մնալ նրանց նշանակում է ոչ միայն լցնել կյանքը անգնահատելի հարստությամբ, այլև ունենալ

հզոր բարերարներ, որոնք կարող են օգնության հասնել դժվար պահերին, նույնիսկ փրկել հոգեկան ձգնաժամերից և ողբերգություններից:

Ճգնաժամեր և ողբերգություններ աշխարհը շատ է տեսել, սակայն հայ ժողովրդի մեծ ողբերգությունը աննախադեպ երևույթ էր ամբողջ մարդկության պատմության մեջ:

Ծրագրված կերպով բնաջնջել ու կոտորել մի ամբողջ ժողովուրդ կարճ ժամանակում՝ բացեիբաց հրամայելով, որ պետք է չխնայել օրորոցի երեխաներին անգամ: «Նպատակ» էր դրված ոչնչացնել հայ ժողովրդին և դատարկել նրա բազմահազարամյա հայրենիքը. այդպիսի բան չէր եղել երբեք: Ու հենց դրանով էլ հայ ժողովրդի ողբերգությունը ախտանշական երևույթ է ամբողջ մարդկության ապագայի համար: Հայոց ցեղասպանությունը չձանաչելով և համապատասխան եզրակացություններ չանելով՝ մարդկությունը հասել է այնպիսի «հզորության», որ ի վիճակի է նույնիսկ բնության թաքուն ուժերով ոչնչացնելու իր իսկ թագն ու պսակը, այսինքն՝ ինքն իրեն, իր հետ՝ մարդկային ոգին, նաև կյանքը՝ առհասարակ: Եվ մարդկությունը մնացել է այնքան թույլ, որ կարող է զոհ գնալ իր իսկ «հզորությանը»՝ հակա-

ռակ իր կամքին:

Հենց շահամոլությունն է այդ թուլությունը: Ուրեմն, ահա երկու ծայրերը գորդյան հանգույցի՝ **շահամոլությունն** իր բոլոր հետևանքներով, և **ապագայի** գիտակցությունն իր բոլոր ձգտումներով:

Շահամոլություն՝ այլանդակ ծնունդ. նենգափոխում, խաթարում է օգուտը և չարաշահում, լլկում է մարդկային ոգին և բնությունը: Թշնամանքով է թունավորում հարաբերությունները մարդու և բնության, նաև՝ մարդու և մարդու միջև, որը կհասցնի կործանման:

Ապագայի գիտակցություն՝ բարի ծնունդ. նվիրագործում է օգուտը և ազնվացնում, խորացնում է մարդկային ոգու և բնության ներդաշնակությունը՝ նախնական կապից ավելի բարձր համերաշխություն ստեղծելով մարդու և բնության, նաև մարդու և մարդու միջև: Եվ այդ երաշխիքը մարդու գոյատևման բանաձևն է, առանց որի չի կարող շարունակվել ձամփորդությունը դեպի մեծ **նպատակ**:

Պայքարն իր ամենաձակատագրական փուլին է հասել այսօր: Սա արդեն կենաց ու մահու պայքար է շահամոլության և ապագայի գիտակցության միջև, ու կռվասպարեզը ամբողջ մարդկային

կյանքն է և մարդկային հոգին...

Ոչ միայն ամբողջ մարդկության ես-ը, ոչ միայն ամեն մի ժողովրդի ուրույն ես-ը, այլև յուրաքանչյուր անհատի ես պետք է անձնապես պատասխանատու լինի ապագայի համար:

Այսօր մարդկությունը կանգնած է ձակատագրական հարցի առջև՝ «լինել, թե՞ չլինել»: Այս հարցի լուծումից է կախված ձշմարտության հետագա որոնումը, վերջին հաշվով՝ բուն իսկ ձշմարտությունը:

Պիտի հաղթանակի՞ մարդկության մեջ ապագայի գիտակցությունը՝ հաղթահարելով միլիոնավոր տարիների խորքից եկած ատավիստական կրքերը, որոնք թաքնված են պատմական բազում նախապաշարումների մեջ: Հենց այս հարցադրման և վերլուծական հիմքի վրա էլ կառուցված են բանաձևերը, ասույթները, խրատները, մեջբերումները և դատողությունները, որոնք ներառված են գրքի երեք՝ **«Բանական միտք», «Պայքար», «Հայ»** ենթագլուխներում և շատ հակիրձ ու հստակ ներկայացված են ընթերցողի և ուսումնասիրողի դատին:

Նպատակս հետևյալն է՝ արժեքային համակարգի միջոցով ընդհանուր պատկերացում տալ և զարգացնել մտածելակերպ, որը հանդիսանում է

արարման, ինքնաձանաչման և ինքնակատարելագործման շարժիչ ուժը:

Մարդուն տրված է ազատություն և իրեն կերտելու հնարավորություն: Նա միաժամանակ պատասխանատու է իր արարքների համար: Ընտրության երաշխիքը պետք է հանդիսանա բարոյական ինքնակատարելագործումը: Քանի որ իմաստասիրությունը ուղղված է համընդհանուր բարիքի և առաքինությունների ձանաչողությանը, ուստի դրանով պետք է զբաղվեն բոլորը, ով կարող է: Իմաստասիրությունն է սովորեցնում ազատ ապրելու, ազատ մտածելու և ազատ գործելու արվեստը: Մարդու մտածողությունը, նրա արժանապատվությունը նաև ազատախոհության մեջ է: Ոչ թե պետք է կուրորեն հետևել «հեղինակություններին», այլ ծանոթանալ տարբեր ուսմունքների, տարբեր կարծիքների, գնահատելով դրանց արժանիքներն ու թերությունները, սեփական ձանաչողական փորձով ինքնուրույն հասնել ձշմարտության բացահայտմանը: Անսպառ է մարդկային ձանաչողությունը և մարդն ի վիձակի է ձանաչողականության մեջ ընդգրկելու կեցության բոլոր աստիձաններն ու գոյերը:

Բանական միտքը և պայքարելու առանձնակի ունակությունը հայ մարդու էության ու գոյության

հազարամյակների խորքից եկած և դեպի հավերժություն տանող ընթացք է: Հայի պարզ, խորիմաստ և բացառիկ լեզվամտածողությունը հզոր գիտություն է և հնարավորություն է ընձեռում իմաստաբանական իրական լուծումներ ստանալու, որը տանում է էության ընկալման՝ բնությունը ձանաչելով: Բանական միտքը հիմնված է բնության պարզ, անաղարտ և ձշմարիտ օրինակի վրա:

Իմ կյանքի հիմնական խնդիրը եղել և մնում է մարդկային ձշմարիտ էության որոնումը՝ պայքարելով գոյության դաժան իրողությունների դեմ: Այստեղ փորձ է արված հնարավորինս հակիրձ և բովանդակալից ասել

այն ամենը, ինչ որ պետք է:

Օգտագործված են նաև հանրահայտ իմաստություններ, ասույթներ և մեջբերումներ, առանց որոնց ներկայացվածը թերի կլիներ: Պարզապես կան էական բաներ, որ ասվել են, բաներ էլ կան, որ ասվում են և ասվելու են, սակայն տեսնելով և զգալով, ընկալելով և հասկանալով, վերլուծելով և զարգացնելով՝ դրանք կարող ես քոնը համարել, քանի որ քո առանցքում են գտնվում և ծառայում բնությանը:

Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր

անհունորեն **Մեծին** են ձգտում, այսինքն՝ ճշմարտությանը և երջանկությանը:

Հուսով եմ, որ գրքում զետեղված և մշակված մոտեցումները լինելու են արդյունավետ և ծառայելու են **Նպատակին**:

Յուրաքանչյուր ոք նպատակին մոտենում է իր ջանքերին համապատասխան: Ճշմարիտ գիտելիք ստանում է իրական փնտրողը:

ԲԱՆԱԿԱՆ ՄԻՏՔ

Բանաձևեր

Բանաձևեր, որոնց ընդհանրությունը տանում
է ինքնաձևանաչողության և
ինքնակատարելագործման՝
համեմատության մեջ:

Կյանքի իմաստը
կատարելագործման մեջ է:

Բնութագրող և ամբողջական,
տեսած ու ճանաչած,
հակիրճ ձևակերպված բանական միտքը
բանաձև է:

Ձևը և ոճը
ծառայեցվում է նպատակին՝
բանաձևերի միջոցով:

Աշխարհ

Աշխարհը կետերի կատարյալ
համակարգված և ներդաշնակ ,
բազմազան և յուրօրինակ միացություն է,
արարման և գործի անթերի արդյունք:

Բնությունը
Աստծո առարկայական պատկերն է:

Բնապաշտն է, որ
տեսնում է լույս և հավատք:

Օրինակ բնությունից են վերցնում:

Բնությունից զատվել նշանակում է
բանականությունից զրկվել:

Աշխարհը բավական մեծ է
յուրաքանչյուր մարդու պետքերը հոգալու
և շատ փոքր՝
մարդկային ագահությունը բավարարելու
համար:

Տեսակի տեղը, ձևը և դերը
որոշում է բնությունը՝
օժտելով նրան համով, հոտով, գույնով
և բովանդակությամբ:

Բնությունից ստացածի
և սկզբունքներին համաձայն գործելու
ունակությունների արդյունքում
կառուցվում է բնավորությունը:

Արարում

Արարել նշանակում է
բարի նպատակ,
ձգտում և իրականացում:

Բարի միտքը արարման նախահիմքն է:

Գերագույն հաձույքն արարելն է:

Ամենամեծ արժեքը ձշմարիտ խոսքն է,
իսկ խոսքը գործի վերածելը՝
ապրելու և արարելու իմաստավոր ուղին:

Բնությունը ձգտում է բարեփոխվելու
ոգու շնորհիվ, իսկ ոգին ձգտում է
մարմնավորվելու բնության շնորհիվ:

Բարի խոհեմությունը շնորհ է պարգևում.
օրենք ձանաչելը
բարի մտքին է հատուկ:

Մտքի գործը ձշմարտությունը ձանաչելն է,
կամքի գործը՝
ազատ բերումով բարին գործելը:

Մտքի ձամփա

Միտքը գոյի պարզ ըմբռնումն է:

Միտքը ձամփորդում, թափառում է,
որի միջոցով երևակվում է:

Մտքի արագությունն անգերազանցելի է:

Մտքեր տեղադրել նշանակում է
ոլորտը գիտենալով
հերթականություն և զիջում սահմանել:

Հերթականության մեջ մեծ բան է դրված:

Նայում ես աչքերով,
տեսնում և ընկալում՝ մտքով և հոգով:

Միտքն էլ բախտի պես բան է:
Գեղեցիկ միտքը հնչեղ երանգ է սիրում:
Միտքը թրծվել է սիրում:

Բանն է սկիզբը ամենայնի:
Տերը միտքն է, և միտքը Տիրոջից է:

Բնության օրենք

Բնության օրենքների ձանաչումով
կբացվի ճշմարտության ձանապարհը:

Ճշմարտության ձանապարհով գնալ
նշանակում է ջանասիրաբար ընթանալ
բնությանը համընթաց:

Բազմաթիվ ուղիներ
տանում են դեպի մոլորություններ,
իսկ դեպի ճշմարտություն՝ միայն մեկը:

Ժամանակը ճշմարտության բարեկամն է,
Իսկ նախապաշարմունքը՝ թշնամին:

Գործի իրավացիության մեջ վստահ է նա,
ով ձգտում է ճշմարտության:

Ճշմարտասեր հոգին
ճշմարտության գլխավոր զենքն է:

Առողջ քննադատությունից
ճշմարտությունը միայն շահում է,
իսկ կեղծիքը՝ վախենում է:

Ճշմարտությունն էլ
տարածության և ժամանակի պես
անսահմանություն է սիրում:

Ճշմարտությունը գոյի հիմքն է:
Հորինվում է միայն սուտը:

Ոմանք վախենում են ճշմարտությունից,
որպեսզի այն չմերկացնի իրենց:

Ճշմարտության ճանապարհները անցնում են
փորձություններով և տառապանքներով:

Ճշմարտությանը չճգտելով՝
արդարություն չեք տեսնի:

Երկու և ավելի հակադիր կարծիքների միջև
ընկած է խնդիրը և ոչ թե ճշմարտությունը:

Բանականության և ազնիվ սրտի,
տառապանքի և երջանկության,
զգացմունքների ներդաշնակության և
գեղեցիկի ընկալման բաղձալի ու երանելի
արդյունք է ճշմարտությունը:

Իմաստություն

Իմաստությունը հենց ճշմարտության մեջ է՝
ուրույն ձևով և ոճով:

Պետք է հետևել երեք սկզբունքների՝
ճշմարտություն, ազնվություն,
օգտակարություն:

Երևույթների պատճառի ճանաչելը
Իմաստության հիմքում է դրված:

Հոգուն՝ իմաստություն,
մարմնին՝առողջություն:

Երբ դուք ցանկանում եք ճանաչել
բնությունը,
գնահատել նրա գեղեցկությունը, ապա
պետք է
հասկանաք այն լեզուն, որով բնությունը
խոսում է:

Իմաստությունը շնորհ է, հիմարությունը՝ մեղք:

Խելացի ձևացող հիմարը շատ վտանգավոր է:

Հիշողություն

Հիշողությունը ժամանակը խտացնում
և մոտեցնում է հավերժին:

Ջուրը, ուշադրությունը և ոչ անհետ
մոռացումը կառուցում են հիշողությունը:

Ջրից հիշողությունն է սնվում,
հիշողությունից՝ ջուրը:

Տեսել եմ ավելին, քան հիշում եմ
և հիշում եմ ավելին, քան տեսել եմ:

Ինչ-որ բան հիշելու լավագույն միջոցը
այդ ինչ-որ բանը մոռանալու փորձն է:

Ամեն բան պետք է նորից և յուրովի անել.
կրկնությունը ձգտում է կատարյալին:

Հնարավորինի սահմանները
ճշգրտելու միակ ձևը
այդ սահմաններից դուրս գալն է:

Հասկացողություն

Հասկանալ նշանակում է
էության ընկալումով կայանալ,
ունենալ բանական միտք,
բարձր զգայական համակարգ,
գիտելիք, ճաշակ,
արժանապատվություն:

Յուրաքանչյուր ոք
իր տեսածի և զգացածի, ասածի և արածի,
ընկալածի չափով է հասկանում:

Մինչև չգիտենաս, թե ինչ է բնականը,
երբեք չես հասկանա, թե ինչ է լավը:

Կյանքում լավ օրեր ունենալու համար
նախ այդ իրավունքը վաստակել է պետք:

Վատը ժխտել է պետք, որ լավը չտուժի:

Մտածողություն

Մտածողությունը գործունեության փորձը
վերածում է խոսքի, այն սեղմում,
դարձնում է գաղափարներ,
թեորիաներ, բանաձևեր:

Իսկական գիտելիքը
ոչ թե փաստեր հավաքելու մեջ է,
որը մարդուն դարձնում է պատանդ,
այլ փաստերի օգտագործման մեջ է,
ինչը մարդուն դարձնում է փիլիսոփա:

Ով ցանկանում է որևէ բան անել,
միջոց կգտնի,
ով չի ցանկանում՝ պատճառ կգտնի:

Այն ամենը, ինչ որևէ մեկի կողմից
լավ է ասված, ես համարում եմ իմ ասածը:

Ապրելու ձանձրույթից ազատվելու
միակ միջոցը
նվիրումով որևէ բան անելն է:

Ինքնաձանաչողություն

Ինքնաձանաչողությունն նշանակում է
հասկանալ և մերձենալ
արարման ոգուն,
բնության տվածը մշակել այնպես,
որ բնությունը չտուժի:

Բնության հմայքը նրա անկրկնելի
բազմազանության և յուրօրինակության մեջ է:

Բնության կամեցողությանը
արժանանալ է պետք:

Վերաբերմունքն է արժևորվում:

Ինքնաձանաչողության և
ինքնակատարելագործման համար
հարկավոր է հասկանալ ընդհանուրը
և ամբողջականի մեջ քո տեղն ու դերը:

Մեր դատողությունների
համապատասխանությունը
Բնության ստեղծածին.
սա՛ է ճշմարտությունը:

Էություն

Էությունը գոյություն է,
նշանակություն, պարունակություն և իմաստ:

Էության երևակման շարժը տեսնելով՝
շարժվել է պետք:

Կայացիր ճիշտ ընտրությամբ,
ճանաչելով՝ հաստատվիր:

Ընտրություն կատարելուց առաջ
ճանաչիր ինքդ քեզ:

Կայանալով կգտնես ազատություն:

Ազատությունն այն է,
երբ ինքդ ես կառուցում սահմաններ:

Ազատություն նշանակում է
պատասխանատվություն:

Բանականություն և ազատ կամք՝
ահա թե ինչն է հրաշքներ գործում:

Հավատք

Հավատք նշանակում է
համակարգված հավաքական միտք,
մեկ ամբողջական ճշմարտություն:

Երևակայությունը հոգու աչքն է:

Հոգու տաճարը կերտել,
կատարելագործել և պահել է պետք:

Հավաքական միտքը,
ռեսուրսների և պոտենցյալի
արդարացի և ներդաշնակ վերաբաշխումը
իմաստության և ուժի հատկանիշներ են:

Ամենամեծ պարտքը հոգունն է,
ամենամեծ մեղքը՝ կրկին հոգունը:

Միայն նեղության պահին
Աստծուն հիշելը արդարացված չէ:

Ճակատագիր

Ճակատագիրը
դեպքերի և դրվագների, դեմքի և դրվածքի,
նախօրոքի և քո ժամանակի
իրական ընթացքն է:

Ճակատագիրը տառապանքներ է տալիս,
որպեսզի փորձի:

Փորձը փորձանքներից խուսափելուն
պիտի ծառայի:

Վթարը ճակատագրի զգոնության կոչն է:

Վթարները շատացել են, որովհետև
այսօրվա մարդիկ երեկվա ճամփեքով
սլանում են վաղվա մեքենաներով՝
մյուս օրվա արագությամբ:

Ամենախելահեղ ֆանտազիաներից
մինչև ռեալ իրականություն
ընկած տարածությունը կրճատվում է
անհավատալի արագությամբ:

Բաներ կան

Բաներ կան, որոնք պատահում են,
որպեսզի մտածենք դրանց մասին:

Բաներ կան, որոնք գերադասելի է
պատկերացնել, սակայն չտեսնել:

Սպասելին և լինելին որոշ դեպքերում
տարբեր բաներ են:

Բաներ կան, որոնցից պարզապես
խուսափել է պետք:

Բաներ էլ կան, որոնց համար
կրկնակի պատասխանատվություն է պետք:

Ներքին խոհանոցում
շատ հետաքրքիր բաներ կան:

Բաներ կան,
որոնք հեռվից ավելի տեսանելի են:

Դրույթներ

Դրույթները ծնվում են միմյանցից:

Ուժեղ երևակայությունը
իրադարձություն է կանխատեսում:

Երևակայության ուժը մեծանում է
գիտելիքների ուժին համեմատ:

Երևակայությունը լրացնում է
իրականությունը:

Հարցի ձևակերպումից
բխում է պատասխանը:

Մի բանից երկրորդը չի լինում.
նմանակումը կեղծիք է:

Քեզ նայիր ուրիշի աչքերով
և համեմատիր հայելում եղածի հետ:

Շարժումների լեզուն
ամենահասկանալին է:

Սկզբունք

Սկզբունքի հետևից գնացողը
մոտենում է սկզբին:

Սկզբունք գիտենալը
հեշտությամբ փոխարինում է
այլ փաստերը չգիտենալուն:

Հանգամանքները փոխվում են,
սկզբունքները՝ ոչ:

Դեպքերը
իրականության առօրյա փաստերն են:

Փաստը ուժ է ստանում արձանագրվելով:

Անարդար միջոցներով
արդար նպատակ չես հետապնդի:

Խելամիտ տնտեսումը հանգեցնում է
ժամանակի խնայողության.
ժամանակի կորուստն է, որ անդառնալի է:

Վեհություն

Վեհությունը ցավը հաղթելն է:

Գեղեցիկն աստվածային է,
վեհը՝ մարդկային:

Ազնվությունը ինքնին վեհություն է:

Մեծ ցավի առկայությունը
մտածելու և գործելու տեղիք է տալիս:

Ցավն է իրականացնում կապը
մարմնի և հոգու միջև:

Ցավ է, երբ հիշողությունը նսեմանում է,
դժբախտություն՝ երբ խեղաթյուրվում է:

Տառապանքն այն է,
երբ շատ ցավեր քոնն ես համարում
և բարին գործում:

Մեզ վրա անասելի թանկ են նստում
մեր չքաշած տառապանքները:

Միայն կամովին տառապանքն է
արժեքավոր:

Ինչպես անում ես, այդպիսին կաս:

Պետք

Էության և գործունեության մեջ
պետք-ը պարտադիր ու գործուն պայման է:

Անհրաժեշտությունը
ամենալավ խորհրդատուն է:

Պետքն ու պիտանին գիտակցելը
և հօգուտ բնության ներդնելը
իմաստության նշան է:

Գործունեությունը անպտուղ կլինի
առանց գաղափարի:

Մտքի լավագույն թարգմանը
ծավալած գործունեությունն է:

Պիտի ձանաչենք, որ գործենք,
պիտի իմանանք, որ կանխատեսենք:

Պարտաձանաչությունը
պարտադիր պայման է:

Ուրիշի թերությունները պետք չէ
սեփական արժանիք համարել:

Պարզ բաներ

Պարզը, ճշմարիտն ու բնականը
այն է, ինչ որ պետք է:

Ամեն ինչում ամենագեղեցիկը
պարզությունն է:

Պարզ բաները համադրելը,
ներդաշնակելն ու ընդհանրացնելը
բարդ ու պատասխանատու գործ է:

Կուտակված անպատասխան հարցերը
կշեղեն բնական ընթացքից:

Էական զգացմունքների
կորստյան արդյունք է ոգու սովը:

Բնության առեղծվածը կամ հրաշքը
միայն Ինքը կարող է պարզել:

Առյուծի մեջ մեկ ու մեջ
խոսում է կատուն:

Հետաքրքրասիրություն

Հետաքրքրասիրությունը
անսահմանություն է սիրում:

Գիտեցածի ընկալումը
մի նոր գիտակցության է բերում:

Թերությունները գիտենալը
մեծ առավելություն է տալիս:

Կամքի պակասությունը
խելքի պակասության արդյունք է:

Հիմարի արատը կասկածամտությունն է,
իսկ խելոքի թերությունը՝
դյուրահավատությունը:

Հետին միտքը առաջինից առաջ է:

Հոգևորի և նյութականի ներդաշնակությունը
կբերի բարձր իմացության:

Ապրել

Ապրել նշանակում է իմաստավորել մահը:

Ապրելը կերպ է, ապրեցնելը՝ արվեստ:

Մահը նույնքան բնական ընթացք է,
որքան կյանքը,
մահից վախենալ նշանակում է նաև
կյանքից վախենալ:

Մահից պետք չէ վախենալ
և ոչ էլ այն ցանկանալ:

Մեռնողը բարին թողնում է,
չարը, որպես մեղք, տանում:

Մահվանից հետո
վերածվում ես խրատի:

Ողջեր կան, որ
մահացածներից ավելի մեռած են:

Ով մահը զգացել է, նա գիտի ոնց ապրի:

Տարածքում ծավալվել

Տարածքում ծավալվել կարող է նա,
ով ճշգրտորեն տեսնում և ընկալում է
ժամանակի մարտահրավերները:

Լավ ընկալելու համար
պարզապես զգալ է պետք:

Վաղվա օրը երաշխավորվում է սերնդով,
համակարգով և այսօրվա արածդ գործով:

Օրեր կան, որոնք տարի արժեն.
ցավոք այդ օրերը քիչ են լինում:

Ծպտված ես-ի և գիտակցված մենք-ի
օգտակար գործողության գործակիցը
հրաշալի արդյունք է:

Անուն կրել

Անուն կրել նշանակում է
համապատասխանել իմաստին:

Գենին կյանքով ես պարտական:

Ումով և ինչով
անկեղծորեն ուրախանում ենք,
լավը այն է:

Կարևորն այն չէ,
թե քեզ ի՞նչ են համարում,
այլ այն, թե ո՞վ ես դու իրականում:

Կարևորը այն չէ,
թե ում հետ ես ապրում,
այլ այն, թե ում հետ կուզեիր ապրել:

Դուրսն են...
աչքիս լույսն են, ուշքս ու միտքս են...

Կարոտն այն է,
երբ կար հոտը ու հիմա չկա:

Չափ ու սահման

Չափ ու սահմանի իմացությունը
բարձր գիտակցության արդյունք է:

Հերթականություն և զիջում կիրառելը
դեպի օրինականություն տանող ընթացք է:

Իրավունքի ուժը բխում է իմացության ուժից:

Իրավունքի թշնամին
անհիմն արտոնությունն է:

Ավելորդ ներողամտությունը
խրախուսում է հանցանքը:

Սրիկան հակված է մտածելու,
որ մնացած բոլորը նման են իրեն:

Միայն նա է ազատ,
ով չի ստրկանում սեփական կրքից
և ուրիշների քմահաճույքից:

Ազատությունից տալիս են
միայն արդարության համար:

Մարդ

Մարդու պարտականությունը մարդ մնալն է:

Մարդու տեսակն ու տեսակետը
մեկը պիտի լինի:

Մարդը աճում է գործունեության մեջ:

Մարդասիրություն նշանակում է
արդարացիություն:

«Մարդ չես» ասելը
ամենամեծ վիրավորանքն է:

Խղճահարությամբ երբեմն
մարդուն ստորացնում են:

Վարքագիծը հայելի է, որի մեջ
յուրաքանչյուրն իր դեմքն է ցույց տալիս:

Նկատողությունը
պետք է տեղին և չափավոր լինի:

Արդար է նա, ով բոլոր էակների նկատմամբ անաչառ և ազնիվ վերաբերմունք է ցուցաբերում:

Ազնվությունը բաց, անկեղծ վերաբերմունքն է:

Կեղծ պարզությունը նուրբ խաբեություն է:

Ապերախտ մարդիկ այն շներին են նման, որոնք ոսկոր նետողից ավելի ոսկորն են սիրում:

Գիտունների և տգետների թվերի հարաբերությունը կայուն հաստատուն է եղել մարդկային ցեղի գոյության ամբողջ ընթացքում:

Մարդու «հոտը»-ը վեցերորդ զգայարանով է գալիս:

Մարդու վերջը բարի լինի, ով ինչ անի, իրեն կանի:

Օգնել

Օգնել նշանակում է բացահայտել և ուղղորդել ունակությունները:

Լայնախոհությունը հավասար է խորաթափանցությանը:

Տեղին քիչը ավելին է, քան անտեղի շատը:

Խրատի արմատը դառն է, պտուղը՝ քաղցր:

Արդար բաժանիր, որ տիրես. արժևորիր արժանիին:

Անարժանից ոչինչ չխնդրեք:

Խիղճը արարքների կիրառումն է ներքին ես-ի օրենքների նկատմամբ:

Պատիվը արտաքին խիղճն է,
իսկ խիղճը՝ ներքին պատիվը:

Ճիշտ հետևությունները
բարի հետևանք են ունենում:

Կործանվում են չափը կորցնելուց:

Ասած և արած

Ասածի և արածի
ինքնաբուխ գործունեության արդյունքը
հաջողությունն է:

Ամեն ինչ լավ է արված,
երբ արված է կրկնակի և նորովի:

Արա ինչ կարող ես, ինչով կարող ես
և որտեղ կարող ես...

Փորձել ամեն ինչ անել միանգամից
նշանակում է ոչինչ չանել:

Ժամանակին ասելով՝ անելիքը շահում է:

Մեծ նպատակից ծնվում են մեծ գործեր:

Համառ կամքը
արիության և հաջողության գրավականն է:

Ուժի մեծագույն մարմնավորումը
հաձախ պարզ համբերությունն է:

Կյանքի հիմք

Կյանքի հիմքը ռիթմն է, որը տրված է
ուրույն խառնվածքով և շնչառությամբ:

Կյանքը գործ է, գործը՝ պայքար:

Զափավորությունը բնության դաշնակիցն է
և առողջության պահապանը:

Առողջությունը
հոգու և մարմնի ամբողջականությունն է:

Բժիշկը հիվանդի և միջոցի կապն է:

Անբուժելի հիվանդությունները
ամենավատթարն են, սակայն ստիպում են,
որ կյանքդ ապրես այնպես,
ինչպես կապրեիր վերջին օրերդ:

Առողջությունն ու հաջողությունը
սնում են իրար:

Ծերությունն էլ ունի իր վայելքները, որոնք
ուղիղ համեմատական են ապրածին:
Արժանապատիվ մահը ապրածի հետևանք է:

Սեր

Սերը ապրելու ցանկությունն է:

Սիրել նշանակում է նվիրումով տիրել:

Անհնար է առանց խիզախության
ճշմարտություն որոնել կամ
առանց հոգատարության պահպանել սերը:

Որտեղ ապրում է սերը, այնտեղ և ցավ կա:

Սիրելով գտնում ենք, ատելով՝ կորցնում:

Սերն առանց հարգանքի անկայուն է,
հարգանքն առանց սիրո՝ անզոր:

Այն սպասումն է հաճելի,
երբ ակնկալում ես ցանկալի արդյունք:

Եռանդուն կերպով իր առարկային ձգտող
էական ուժը կիրքն է:

Անչափ բծախնդիրը միշտ խնդիրներ ունի:

Երջանկություն

Երջանկությունն անհունորեն Մեծն է:

Մեծը հարատևն է, հարատևը՝ արդարը:

Արդարությունը ճշմարտությունն է՝
գործողության և մտածողության մեջ:

Երջանիկ ապրելու համար պետք է
առավելագույնս կապվել նպատակին:

Երջանկությունը կատարելության ձգտումն է:

Բնորոշել կարելի է
երջանկության մասին պատկերացումով:

Երջանկությունը պիտանի լինելու մեջ է.
երջանիկ կլինես երջանկացնելով:

Ունեցածը գնահատելու և բավարարվելու
ունակությունը երջանկություն է:

Ապագա

Ապագայի գիտակցությունը
ճամփորդություն է դեպի մեծ նպատակ՝
դեպի ճշմարտություն:

Ապագա կարող է կերտել միայն նա,
ով գնահատում, արժևորում է անցյալը
և ներկայանում արժանապատվորեն:

Անցյալի գաղտնիքները ապագայի բանալին է:

Անցած ժամանակի մեջ խորանալ
նշանակում է ապագան տեսնել.
անցյալդ քանդելով կամ խեղաթյուրելով
ապագա չես կառուցի:

Վայելքն այն է, երբ ինքդ լուրջ ներդրում ունես
և տեսնում ես զգալի արդյունք:

Անմահ է միայն այն գործը,
որը ապագային թևեր է տալիս:

Ապագան կերտվում է
սերունդ դաստիարակելով և կրթելով:

Ընկեր-բարեկամ

Հավատարմություն և վստահություն.
սա է բարեկամության հիմքը:

Ընկերոջդ վերաբերվիր ինչպես ինքդ քեզ,
հայրենիքիդ վերաբերվիր
առավել, քան ընկերոջդ:

Ասա ով է ընկերդ, կասեմ ով ես դու:

Ընկերությունը լուրջ գործոն է
ու պիտի ծառայի Բան-ին:

Ուխտադրուժ «ընկերը»
ավելի վտանգավոր է,
քան ոխերիմ թշնամին:

Միայնակ է նա, ով զրկված է
անկեղծ բարեկամներից:

Օգնիր ինքդ քեզ,
և բարեկամներդ քեզ ավելի կհարգեն:

Ոչինչ այնքան դյուրին չէ և ոչինչ այնքան
թանկ չի գնահատվում, որքան հարգանքը:

Գեղեցկություն

Բնության և բանականության,
համամասնության և համաչափության,
մտքի և զգացողության,
հոգու և մարմնի,
հնչյունների և բառերի,
նոտաների և գույների
պարզ և մաքուր ներդաշնակությունը
զարգացնում է ճաշակ և տալիս գեղեցիկը:

Սիրունի հետևից գնացողը
գեղեցիկը չի տեսնի:

Արվեստը գնում է այնտեղ,
որտեղ շահը չի խոսում:

Արվեստը միշտ պետք է
հաղթանակած լինի:

Լավ արվեստագետը չի կապկում,
նա պարզապես վերցնում է:

Ձևերն են միայն փոխվում.
արվեստը մնում է նույնը՝
բնությունը վերարտադրելու
ազատ և ներշնչված զգացումներով:

Գեղեցիկի ձանաչողությունը
փրկության հույս է տալիս:

Փոխաբերություններ

Երբ-ը երբեք չփոխեք եթե-ով:

Բայց-ը փոխիր սակայն-ով:

Պետք-ը պետք է
չփոխել անհրաժեշտով:

Մասսայականը չփոխեք մասամբ-ով:

Պետք է հարմար լինել
և ոչ հարմարվող:

Անարդարը և անհավասարը
պետք է չշփոթել:

Իրավ-ը պետք-ի նախանշանն է:

Պայմանը խախտվել չի սիրում:

Արդարը բարու մեջ է:

Ուժեղը ձշմարիտն է:

Բարու տված ծիլերը զորեղ են:

Ես-ը պետք է ապրի մենք-ի մեջ:

Ատելությունը եսամոլության ծնունդ է:

Քար սրտից սարսափելին
հեղհեղուկ ուղեղն է:

Շտապ չի նշանակում հապշտապ:

Տարաժամ մի՛ ցուցաբերիր
փութաջանություն:

Եվ ավելորդ շտապողականությունը,
և՛ դանդաղկոտությունը հանգեցնում են
անցանկալի արդյունքի:

Խառը մտքեր

Խառը մտքերը
հրաբուխի խառնարանի պես բան են:

Պահը
ժամանակը իմաստավորող չափանիշ է:

Պատահականությունն ու զուգադիպությունը
խոր արմատներ ունեն:

«Պատահական» հայտնագործություն
կատարում է
նախապատրաստված միտքը:

Կանխազգալն ու կանխատեսելը
գուշակություն չեն:

Լռությունը երբեմն կարող է
ամենադիվային սուտը դառնալ:

Ամենապահովը նա է, ով զգում է
անհրաժեշտության սահմանը:

Լռությունը համաձայնության
կամ անորոշության նշան է:

Ամենալռակյաց զգացումը
արհամարհանքն է:

Արգելանքներից զրկվելը
կարող է կործանարար լինել:

Շատ դարդեր տարած մարդը
երբեք դարդ չի դառնա:

Չարությունը նախանձի և անզորության
հետևանք է:

Վտանգներ

Վտանգների մասին չմտածելը
վտանգավոր է:

Դժվարություններն ու կարիքը ծնում են
հաղթահարելու ընդունակություններ:

Անտեղի միջոցներ վատնելը և ժլատությունը
տգիտության արդյունք են:

Միայն տխմարը կարող է տգետ մնալ:

Գործունյա տգետներից
ավելի սարսափելի բան չկա:

«Բարեգործության» կարիք չի լինի,
երբ գործը բարուն ծառայի:

Ցուցումով արված բարությունը
ամենևին էլ բարություն չէ:

Բարեգործի առաջնային հատկանիշը
պետք է լինի ազնվությունը:

Երբ գոյատևելու հարցը առաջնային է,
մնացած բոլոր հարցերը տուժում են:

Իրատեսության չափի
կորստյան պատճառ է
հպարտությունը:

Անտարբերություն

Մեծագույն մեղքը ոչ թե ատելությունը,
այլ անտարբերությունն է:

Սխալը, սուտը և կեղծիքը,
անհիմն ինքնավստահությունը,
անպիտանությունն ու տգիտությունը
չարիքի մարմնավորումն են:

Անպետք լինելը մեծ ցավ է,
անպետք դարձնելը՝ ոճրագործություն:

Անուշադրությունն ու անփութությունը
պատժելի են,
միտումնավորության դեպքում՝ հանցանք:

Անպատժելիությունը
տանում է հիասթափության:

Միջին-ի ընկալումը
կարևոր գիտակցություն է,
միջակությունը՝ անպիտան:

Վախ

Վախը թերահավատության նշան է:

Վախենալ նշանակում է նսեմացնել վսեմը:

Հավատ տալով վստահիր:

Որտեղ չկա էական երևակայություն,
այնտեղ վախ էլ չի կարող լինել:

Սարսափելի վերջը գերադասելի է
անվերջանալի սարսափից:

Գնահատիր կատարվածը
գալիքը կանխատեսելու համար:

Անկանխատեսելին մեծ վտանգ է բնությանը:

Մենք վտանգավոր ենք,
երբ չենք իմանում մեր անելիքը:

Ձգնելով պահպանել «դեմքը»՝ ոմանք
շատ հաճախ իրենց հետույքն են կորցնում:

Արժեք

Արժեքը բնական անհրաժեշտություն է,
գիտակցված նպատակ, ինչի համար
պատրաստ ենք վճարել և պաշտպանել:

Արժեքը գնից վեր է:

Քեզ տրված ժամանակի
բանիմաց վերաբաշխումը
արժեքավոր գործոն է:

Յուրաքանչյուր ոք լսում է սոսկ այն,
ինչ հասկանում է:

Խոսքդ տար այնտեղ, որտեղ պետք է:

Շատ խոսելն ու շատ բան ասելը
ամենևին էլ նույն բանը չեն:

Դեմքի արտահայությունը և լեզվի ասածը
երբեմն տարբեր բաներ են:

Որոշակիություն

Անորոշությունից դեպի որոշակիություն
ընկած տարածությունը ձգվում է
երազանքից մինչև նպատակի
իրականացում ժամանակահատված:

Երազանքը նպատակ է ծնում:

Անհույս է նա, ով երազանք չունի:

Կարեկցանքը խղճմտանքից է գալիս:

Բարեսիրտն ու բարեհոգին
բարի մտքով են օժտված:

Բարքերը պայմանավորված են
արքով և վարքով:

Գովեստ ցանկալի է լսել
գովեստի արժանիից:

Օգտակար կշտամբանքը գերադասելի է
կեղծ գովաբանությունից:

Խանգարողներին պետք է փնտրել
և գտնել մեկ քայլ առաջ:

Խոստովանություն

Խոստովանել նշանակում է
տեսնել, ճանաչել, ասել, ուղղվել, քավել:

Միայն արժանապատիվ մարդը
կարող է ուղղել և քավել գործած սխալը.
առանձնակի դեպքերում՝ աննկատ:

Ուզո՞ւմ ես, սակայն չե՞ս կարող
կամ հնար չկա՞, ուրեմն՝ հրաժարվի՛ր.
տրտմում են հնարավորությունը կորցնելուց:

Վատանում են խղճի խայթից:

Ինքնասպանության հիմնական պատճառը
ինքնախղճահարությունն է:

Փրկելու համար
կարելի է նաև ցավ պատճառել:
Նախատել կարող է միայն ցավողը:

Ճշմարտությունը կարեկցանքից վեր է:

Չարիք

Չարը չարչարանք է տալիս,
բարին՝ ջանք:

Շահամոլությունը
բոլոր չարիքների պատճառն է:

Փառամոլությունն ավելանում է
արժանապատվության պակասից:

Ժլատությունը չորացնում է հոգին:

Նախանձը հոգին կործանող թույն է
և հաջողությունների թշնամի:

Ծուլությունը ամեն գործ դժվարացնում է.
ծուլությունը սատանայի ծուղակն է:

Վախը ստի և դաժանությունների
մշտական ուղեկիցն է:

Խորամանկելու սովորությունը
բանականության բացակայության նշան է:

Խորամանկությունից մինչև խարդախություն
ընդամենը մեկ քայլ է:

Բարիք չգործելը արդեն մեծ չարիք է:

Բանկերում թաքցրածը ծառայում է չարին:

Տված փոքր պարտքը մարդուն պարտապան,
մեծ պարտքը՝ թշնամի է դարձնում:

Չարը ինչքան պարտվում է,
այնքան նենգ ու դավադիր է դառնում,
ուստի զգոնության աչքը
միշտ պետք է արթուն պահել:

Շատերը իրենց մեկ սխալը
արդարացնելու համար
ավելի մեծ և զավեշտալի ստեր են հորինում:

Որպեսզի սխալները չկրկնվեն,
պետք է կարողանալ ափսոսալ:
Զղջումը մարդկային ոգու հավերժական
մտահոգությունն է իր ես-ի մասին:

Միայն անշահախնդիր նվիրումով
և բարոյականությամբ
հնարավոր է դուրս գալ բարդ իրավիճակից:

Դրախտ-դժոխք

Դրախտը սիրո արդյունք է,
դժոխքը՝ ատելության:

Դժոխք է, երբ Օրենք չկա,
սակայն «օրինապահները» շատ-շատ են:

Մշտական դատարկաբանությունը
ոչ թե դրախտի, այլ դժոխքի հատկանիշ է:

Սատանա նշանակում է
բնության օրենքները խեղաթյուրող:

Իրական դժբախտացողը
մշտապես գանգատվողն է:

Ակամա մեղքը մեղավոր չէ:

Շողոքորթությունը արատների օգնականն է:

Կասկածել նշանակում է թափը կորցնել:

Հուսալ նշանակում է ցանկանալ:

Ասելիք-անելիք

Ասելիքն ու անելիքը պետք է ապրեն միասին:

Լեզուն ու միտքը ապրում են միասին:

Շնորհքն ու խելքը ապրում են միասին:

Պատիվն ու հարգանքը ապրեցնում են:

Հարգանքի աղբյուրը արժեքավոր գործն է:

Լսելու արվեստը հավասարազոր է
լավ խոսելու արվեստին:

Ցանկացած էական և տակտով կառուցված
բանավեճ ուսանելի է:

Տակտը սրտի բանականությունն է:

Մի քայլ առաջ՝ մի գլուխ բարձր:

Զգացմունքները զարգանում են
փոխադարձությամբ:

Դաստիարակություն

Դաստիարակել նշանակում է
բանականությամբ արարման գործը
ուսուցանել, պարզաբանել, վերլուծել:

Բանականության այբուբենն
ունի երեք հիմնական բաղադրիչներ՝
թիվ, տառ, նոտա,
այսինքն՝ գիտենալ, մտածել, երազել:

Բանականությունը
բոլոր ընդունակությունների միավորումն է:

Դաստիարակության գործում
գլխավոր նախապայմանը
ձշմարտության սերմանումն է:

Դաստիարակությունը խղձի գործն է,
կրթությունը՝ գիտության:

Ընթերցանությունը
խորացնում է մտածողությունը,
միտքը մղում դեպի որոնումներ և
երևույթի վերլուծություն:

Բարոյականության և ողջամտության,
գեղեցիկի ձանաչողության,
արվեստի և հոգևորի ուսումնասիրության,
ֆիզիկական կատարելության և
կենցաղավարության վերաբերյալ
գիտելիք մատուցելու և ներդաշնակելու
խնդիրը ունի դաստիարակությունը:

Պահանջում են սովորեցնելուց հետո:

Գնահատում են ոչ միայն գործերով,
այլ նաև ձգտումներով:

Կայանալ հնարավոր է միայն դպրոցով:

Ժամանակին ուսումնասիրած գիրքը
հսկայական հաջողություն է:

Գիրքը լավն է, երբ արտահայտում է
այն, ինչ որ պետք է և ինչպես պետք է:

Զարգացիր և զարգացրու,
Բարձրացիր և բարձրացրու:

Իմանալ և կիրառել,
ցանկանալ և գործել:

Ուսում

Երբ դադարում ես սովորել,
իրավունք չունես սովորեցնելու:

Ամենակարող միջոցը գրիչն է,
ամենազորեղը՝ տառերը:

Ամենափոքր բարիքը նյութականն է,
ամենամեծը՝ իմաստությունը:

Իմաստությունը չի ասի այն,
ինչը հակառակ է բնությանը:

Լավ իմանալը
շատ իմանալուց կարևոր է:

Խելացին նա է, ով գիտի,
թե ինչի վրա ուշադրություն դարձնի:

Ով շատ է մտածում, նա խոսում է քիչ,
սակայն՝ բնութագրող բառերով:

Ընդօրինակելով սովորում ենք,
կրկնօրինակելով՝ կորցնում:

Գիտության նկատմամբ սերը
սեր է ճշմարտության նկատմամբ:

Գիտությունը մենաշնորհ չի ճանաչում:

Խոսելու և գործելու շնորհը միակ միջոցն է
երևույթի ներսը թափանցելու համար:

Լավ գիրքը մի նվեր է, որ հեղինակը
կտակում է սերունդների ապագային:
Գիրքը հաճախ վճռում է ճակատագրեր:

Սովորում է միայն ուսումնասիրողը:

Ցուցամոլությամբ և շոուներով
կվերածվես խեղկատակի:

Ճաշակով և տեղին հումորի տակ
միշտ թաքնված է լուրջ նպատակ:

Կշտամբանքը հեշտությամբ է տարվում,
իսկ ծաղրը՝ ոչ:

Հիմար ծիծաղից ավելի հիմար բան չկա:

Պետություն

Պետությունը ազգի էությունից բխող
համակարգ է, որի հիմնական նպատակն է
պահպանել, երաշխավորել և զարգացնել
այն ամենը, ինչ որ պետք է:

Իր տարածքում ապրող ազգը
ղեկավարման կարիքը ունի
և ոչ կառավարման:

Ղեկավարը նա է, ով տեսնելով և ընկալելով,
լավ գիտի իր ասելիքն ու անելիքը:

Բռնապետությունն այն է, երբ բոլորը
մեկից են վախենում, այդ մեկն էլ՝ բոլորից:

Այն կառավարությունը, որը սպանել է
ժողովրդի հավատը, կսպանի նաև...

Ընտանիքը
նպատակաուղղված գործունեություն է,
ներսի և դրսի ընդհանրացում:

Քաղաքականություն

Պետական քաղաքականությունը
հնարավորի արվեստ է և
բարձրագույն մշակույթ:

Քաղաքականությունն ու փիլիսոփայությունը
պետք է զուգակցված լինեն:

Բարձրագույն մակարդակներում
թույլ տրված սխալը ճակատագրական է:

Համակարգը ներքին տրամաբանությամբ
և երևույթի ուսումնասիրությամբ
կայացման և զարգացման խնդիրը ունի:

Ղեկավարումը ինքնության վրա հիմնված
որոշակի համակարգի կիրառմամբ
կարգավորումն է:

Լավ ղեկավարվող երկրներում
ամաչում են աղքատությունից, իսկ
վատ ղեկավարվողում՝ հարստությունից:

Քաղաքակրթության ամենամեծ աղետը
«կրթված» սրիկան է:

ՊԱՅՔԱՐ

Ժամանակ

Ժամանակը
անցյալի կապն է ապագային:

Ժամանակը, որ տրված է քեզ,
պայքար է, կյանքը՝ կռիվ,
միայն հաղթանակներն են, որ մղում են
ապրելու, արարելու և զարգանալու:

Բանական միտքը,
ճշգրիտ ռազմավարությունը և
գիտելիքի ժամանակին օգտագործումը
հաղթանակի գրավականն են:

Պաշտպանունակությունը սկսվում է
դաստիարակությունից և կրթությունից:

Քաջությունը ծնվում է պայքարում,
քաջությունը դաստիարակվում է օրեցօր՝
դժվարությունները համառորեն
հաղթահարելով:

Քաջության առաջին արժանավորությունը
ողջախոհությունն է:

Մարտունակություն

Մարտունակությունը գալիս է
գաղափարից և նվիրումից:

Բահը, գրիչը և զենքը
տեղին և նվիրումով օգտագործողը
ծառայում է բնությանը:

Հերոսությունը
բարձր նպատակին ձգտելն է:

Ազնիվ նպատակը
ամբողջ ներուժով գործելու նախապայմանն է:

Դժվարությունները աճում են
նպատակին մոտենալու համեմատ:

Համարձակություն է պետք
հաջողության հասնելու համար:

Որպեսզի հաղթես, երբեք մի՛ կասկածիր:

Գոյապայքարը
գոյատևելու միակ ձևն է:

Բանակ

Բանակի հիմքը միաբանությունն է:

Բնությունը ոչ թե մեծաքանակ զորքի,
այլ գաղափարի զինվորի կողմնակիցն է:

Գաղափարի զինվորը սուր է մերկացնում
միայն հանունի համար:

Լավ զորք ունեցողի համար
դաշնակից գտնելը դժվար գործ չէ:

Հին զինվորը լավ զինվոր է.
այն, ինչ չի սպանում զինվորին,
ավելի ուժեղ է դարձնում:

Ջոհվում են
միայն արժանապատվության համար:

Քաջը մեռնելով հաղթում է մահին:

Մեռնողը մահանում է, զոհվողը՝ ապրում:

Արյունով գրված բանը
ուրիշ ոչ մի բանով չի ջնջվի:

Պատերազմ

Պատերազմը չարիք է, սակայն
երբ ծառայում է բոլոր հանուններին,
և երբ այլ հնար չկա,
թո՛ղ օրհնվի այդ պատերազմը:

Խաղաղությունը հաղթողին ձեռնտու է,
իսկ պարտվողին՝ անհրաժեշտ:

Հաստատուն հայացքներով, գիտելիքով
և ազատ կամքով զինված մարդը
անպարտելի է:

Հարվածելուց առաջ պետք է
գնահատել, հասկանալ նոր գործել:

Կորուստը գիտակցելով
շատ բաներ կգտնես:

Գաղտնիք կարող է պահվել
առավելագույնը երկուսի միջև:

Հետախույզը կրկնակի որսորդ է:

Հերոսությունը, ինչպես և տաղանդը
կրճատում է դեպի նպատակը տանող ուղին:

Սպիների վրա ծիծաղում է նա,
ով վերք չի տեսել:

Անթույլատրելին

Ամենավտանգավորը և անթույլատրելին
հաղթողի անունը գողանալն է:

Ուրիշից գողացված համբավից
ավելի անարգ բան չկա:

Սուտ կոչումները և չվաստակած
պարգևները չարիքի աղբյուր են:

Եվ ավելորդ համարձակությունը,
ներկչոտությունը նույնպիսի արատ են:

Հաղթանակի բերկրանքը ցնորքի կվերածվի,
երբ չի արժևորվում իրական հաղթողը,
և դասեր չեն քաղվում:

Հիշողությունն ու արժանապատվությունը
երբեք չեն ներում զրպարտանքը
և հայրենադավությունը:

Ամենաստոր արարքը դավաճանությունն է:

Անարգ կյանքից ավելի ազատ մահն է գովելի:

ՀԱՅ

Ակունք

Հայը սկիզբն է.
Հայը արիացին է.
Հայը մարդկայինի կրողն է:

Հայ լինելը բարդ է,
պատասխանատու և պատվաբեր:

Հայը շատ հին է ու շատ նոր,
ստեղծագործ և արարող:

Հայոց պատմությունը
մի հսկայական մարտիրոսություն է:

Պատմությունը կերտողինն է.
Մենք դա արել և անում ենք

Նշանակություն

Հայ նշանակում է վեհ:
Հայր նշանակում է հայ-ը կրող:
Մայր նշանակում է իմ, մեր:
Կին նշանակում է կյանք:
Ջավակ նշանակում է շարունակող:
Հայրենիք նշանակում է երկիր...

Ի - *և՛ հարց, և՛ պատասխան:*

Հայոց լեզուն
բնության լեզուն է՝ էությունից բխող:

Հայերենում բառերն ամեն բան ասում են:

Ես հայ եմ՝
կրողը ազգային մշակույթի,
ով սովորելով՝ կայանում է,
արարելով՝ ապրում,
պաշտպանելով՝ հաղթում:

Ազգայինի մեջ միջազգայինը
պարտադիր պայման է:

Բարբառներ

Բարբառները
ցույց են տալիս հայի մեծությունը,
լեզվի և աշխարհընկալման նրբությունները,
ճշմարիտ պատմական ընթացքը, էությունը:

Հայի լեզվամտածողությունը
հզոր գիտություն է:

Մտածելակերպ և ճաշակ
պետք է ձևավորել
հայի աշխարհընկալումով:

Մտածելակերպի հայելին
անձնական կյանքն է:

Խոսելաձևը կառուցվում է ապրելակերպով:

Լեզվի գեղեցկությունը
նրա դիպուկության, պարզության և
արտահայտչականության մեջ է:

Մշակույթ-մշակ

Մշակույթն ու մշակը,
ասույթներն ու ավանդույթները,
խաղերն ու տաղերը
էության և գենի պահպանման
լավագույն միջոցն են:

Կհաղթես
ազգային դպրոց կերտելով,
որը կտանի հավերժության:

Բանի՛ր ի սեր օգտակարի
և ոչ հանուն շահի,
այնժամ կհզորանաս:

Միայն շահին գնալը վնասակար է:

Աշխատանքը պետք է ծառայի գործին,
ինչպես գործը՝ Բանին:

Մեր մեծ ցավը

Բնական ազգ բնաջնջելը
մեծագույն ոճրագործություն է:

Անարգանքի սյունին գամել է պետք
ցեղասպանություն կատարողին:

Հայ դատը և հայի սփյուռքը
մեծ ցավ են,
և մենք պարտադրված ենք
լինել պահանջատեր:

Հայոց ցեղասպանության
ճանաչումով և դատապարտումով
աշխարհը կառողջանա:

Հայոց աշխարհի հանդեպ
գործած ոճիրը
վաղեմության ժամկետ չունի:

Հայի ուղի

Հայի ուղին
բարձրագույն մարտարվեստ է:

Արմատները չիմանալը
և արմատներին չհենվելը
մահացու վտանգ է:

Ազատամարտը համայն հայության
արժանապատիվ գոյության
առհավատչյան է:

Ազատամարտիկի պայքարը
չի վերջանում....

Ազգային արժանապատվությունը
հավաքական և միասնական
արդար պայքար է:

Ով չի սիրում իր հայրենիքը,
օտարից սեր պահանջելու
իրավունք չունի:

Բառ ու բան

Տեղեկատվության մեծ աղբյուրը
հայոց բառն ու բանն է:

Անհնարին բան չկա,
կա համբերատար, անընդհատ
և ուղղորդված գործունեություն:

Արա ամեն օր, անընդհատ
և քո ուժերին համապատասխան,
և դա երբեք քիչ չի լինի:

Սիրել հայրենիքը նշանակում է
անսահմանորեն
ցանկանալ նրանում իրականացված տեսնել
մարդկության լավագույն երազանքները և
իր ուժերի սահմաններում նպաստել դրան:

Վերջ նշանակում է սկիզբ
և տրամաբանական
հավերժ ընթացք:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մենք մեր բարոյականությունը սովորում ենք բնությունից՝ բանականության միջոցով, որը մեզ ցույց է տալիս գոյություն ունեցող, զգայուն դատող բանական արարածներին անհրաժեշտ հարաբերությունները: Մենք կհասկանանք, թե ինչպիսին են մեր և ուրիշների հանդեպ մեր պարտականությունները: Երբ ցանկանում ենք հաճելի լինել բնությանը և ապրել նրան վերագրվող նպատակներին համապատասխան, պարտավոր ենք մեր ուժերը ներածին չափով գործել մարդկային ցեղի բարօրության, ինչպես և մեր սեփական երջանկության և ինքնապահպանման համար:

Հրաժարվելով անհայտ ապագայի մեջ մտովի խորանալուց՝ մենք կդառնանք արդարամիտ, մարդկային, բարեհոգի, կլինենք ներողամիտ մեզ նմանների թերությունների և մոլորությունների նկատմամբ, կձգտենք ինքներս մեզ բարեկրթել, կմարենք այն կրքերը, որոնցով տարվելը կարող է մեզ վնասել, կգտնենք օրինավոր վայելքներ և կհրաժարվենք այն ամենից, ինչը արվում է հասարակությանը և մեզ իսկ վնաս հասցնելու համար:

Վնասելով և խեղաթյուրելով իրականությունը՝ մեծագույն վտանգի տակ է դրվում հավատը ապագայի նկատմամբ:

Վերջապես կհասկանանք այն բոլոր պատրանքների ու անբնական հեքիաթների անհեթեթությունը, որոնցից դարեր շարունակ օգտվել են բնության ընթացքը խանգարողները, որպեսզի «հավերժացնեն» մարդկային ցեղին դեպի սնանկության տանելու իրենց հիվանդագին տենչը:

Ուստի պետք է սթափվել և գործել առողջ բանականությամբ:

Թո՛ղ զարթնի մարդու միտքը:

Թո՛ղ զորեղ և արարող դառնա նա և ամաչի դյուրահավատության պատճառով լարված ծուղակներում հայտնվելու համար:

Թո՛ղ ժողովուրդներին կառավարողները հասկանան անբնական միջոցների ամբողջ վտանգավորությունը, որոնցով մինչև հիմա շառլատանները փորձ են արել մարդկությանը «ապաքինելու չարությունից» և բազում անգամներ սարսափելի ցնցումների են ենթարկել: Հրաժարվենք անհիմն, սուտ և մոլեռանդ «բարոյականությունից», որը կհանգեցնի հասարակության կործանմանը:

Դեն նետենք այն բարոյականությունը, որը հիմնված է սոսկ ուրվականների, կեղծիքների և տեսիլքների վրա, և որոնց կարիքը ճշմարտությունը չի զգում՝ իր հաստատման համար:

Մշակենք առաքինության վերաբերյալ առողջ պատկերացում և դրան հասնելու ճանապարհ չընդունենք մեզ մատուցվող լոկ մեկ խավին ձեռնտու վտանգավոր տիպարներին ընդօրինակելը, նրանց հայացքներին և գործելակերպին հետևելը: Առաքինություն են համարվում այն արարքները, հայացքները և ունակությունները, որոնք օգտակար են ընդհանուր առմամբ ամբողջ հասարակության համար և անհրաժեշտ են բոլոր մարդկանց:

Մի՞թե բնությունը չի բացահայտվում բոլոր նրանց առջև, ովքեր ցանկանում են ճշմարիտ ցուցումներ ստանալ: Մի՞թե բանականությունն անընդհատ չի ասում, որ մարդը ստեղծված է ինքնապահպանության, սիրո և իր գոյությունը երջանիկ դարձնելու համար: Մի՞թե մարդուն շրջապատող ամեն բան չի ասում նրան, թե նրա սեփական երջանկությունը և ապագայի գիտակցությունը կախված է այն ամենից, ինչի հետ կապված է ինքը: Մի՞թե պարզագույն փորձը չի ապացուցում, որ

ուրիշներին, առավել ևս բնությանը վնաս հասցնելով՝ մարդն ինքն իրեն է վնասում, իր նկատմամբ շարժում ամենքի ատելությունը:

Մի՞թե հանապազօրյա օրինակները հստակորեն ցույց չեն տալիս, որ չկա մի այնպիսի արատավոր երևույթ, որը չպատժի իր կրողին, և որ չկա մի առաքինություն, որը հարգանքի չարժանացնի իր կրողին:

Առաքինության ճանապարհով հաստատ քայլելու համար թո՛ղ մարդն ընդմիշտ հեռանա իր այն «առաջնորդներից», որոնք առ այսօր միայն խլացրել, կուրացրել են իրեն և գցել մոլորության մեջ: Իր գործունեության ընթացքում թո՛ղ նա չառաջնորդվի կասկածելի խորհուրդներով, որոնք ավելի շատ պատվիրում են հանցագործություններ, քան գովելի գործեր:

Թո՛ղ նա խորհրդի համար չդիմի այնքան «ոգեշունչ» գուշակների հանելուկային և անկապ պատգամախոսություններին, որոնք կարող են միայն մոլեռանդություն, անվստահություն և շփոթմունք սերմանել:

Թո՛ղ նա իր արարքները գնահատի ոչ թե այն շահով, որ դրանք բերում են միայն մի խավի, միայն մի աղանդի, միայն մի կուսակցության, այլ

նրանով, թե իր արարքները որքանով են օգտակար մարդկային ամբողջ ցեղին:

Թո՛ղ նա հրաժարվի անբնական «հավատից», որը մարդուն բթացնում է, և թո՛ղ վերադարձնի աստվածային բանականությունը, որն անարդարացիորեն զրպարտված ու նսեմացված է դրանից սարսափող բոլոր շահամոլների կողմից:

Բովանդակություն

«Բանական միտքը էության երևակումն է...» . . .
Առաջաբանի փոխարեն
Ներածություն . . . . . .
Բանական միտք . . . . . .
Բանաձևեր . . . . . .
Աշխարհ . . . . . .
Արարում . . . . . .
Մտքի ձամփա . . . . . .
Բնության օրենք . . . . . .
Իմաստություն . . . . . .
Հիշողություն . . . . . .
Հասկացողություն . . . . . .
Մտածողություն . . . . . .
Ինքնաձանաչողություն . . . . . .
Էություն . . . . . .
Հավատք . . . . . .
Ճակատագիր . . . . . .
Բաներ կան . . . . . .
Դրույթներ . . . . . .
Սկզբունք . . . . . .
Վեհություն . . . . . .
Պետք . . . . . .

Պարզ բաներ . . . . . .
Հետաքրքրասիրություն . . . . . .
Ապրել . . . . . .
Տարածքում ծավալվել . . . . . .
Անուն կրել . . . . . .
Չափ ու սահման . . . . . .
Մարդ . . . . . .
Օգնել . . . . . .
Ասած և արած . . . . . .
Կյանքի հիմք . . . . . .
Սեր . . . . . .
Երջանկություն . . . . . .
Ապագա . . . . . .
Ընկեր-բարեկամ . . . . . .
Գեղեցկություն . . . . . .
Փոխաբերություններ . . . . . .
Խառը մտքեր . . . . . .
Վտանգներ . . . . . .
Անտարբերություն . . . . . .
Վախ . . . . . .
Արժեք . . . . . .
Որոշակիություն . . . . . .
Խոստովանություն . . . . . .
Չարիք . . . . . .

Դրախտ-դժոխք . . . . . .
Ասելիք-անելիք . . . . . .
Դաստիարակություն . . . . . .
Ուսում . . . . . .
Պետություն . . . . . .
Քաղաքականություն . . . . . .
Պայքար . . . . . .
Ժամանակ . . . . . .
Մարտունակություն . . . . . .
Բանակ . . . . . .
Պատերազմ . . . . . .
Անթույլատրելին . . . . . .
Հայ . . . . . .
Ակունք . . . . . .
Նշանակություն . . . . . .
Բարբառներ . . . . . .
Մշակույթ-մշակ . . . . . .
Մեր մեծ ցավը . . . . . .
Հայի ուղի . . . . . .
Բառ ու բան . . . . . .
Եզրակացություն . . . . . .
Բովանդակություն . . . . . .

Մնացական Վազգենի Մուրադյան

Mnatsakan Vazgen Muradyan

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ԻՆՉ ՈՐ ՊԵՏՔ Է

ALL THAT SHOULD BE

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Մ. Մուրադյան
Հրատ. խմբագիր՝ Արմեն Ավանեսյան
Համակարգչային շարվածք՝ Վ. Մուրադյան
Տպաքանակը՝ 300

Չափսը՝ 60x84 1/32
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.3 ծ.կ.
Ծավալը՝ 3.75 տպ. մամուլ
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar
Գինը պայմանագրային
Տպագրվել է «ՆՈՎԵԼ» հրատարակչության
տպարանում
Հասցե՝ ք. Երևան, Մայիսի 9 փ. 23

ИЗДАТЕЛЬСТВО **АРМАВ**

Ք. Երևան, Շիրազի 24 շ.
48 բն. հեռ.՝ 34-73-35
էլ.փոստ՝
armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24
д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru